4. Մոմակալ՝ որոյ երեսին գրուած է լաւ գրով.

"Գալուստի որդի Սահակին:

Իսկ անձեւ գրով.

"Այս է յիշատակս Թարիղուլու կողակից Կուլին, ի դուռն Աստուածածնին. ՌՆ Շապիք": (Անհասկանալի բառք:)

5. Մոմակալք երկու միանման, որոց միւս երեսին գրուած է:

"Յիշատակ Աւաքի որդի Մկրտչին, ի դուռն Սահակ վարդապետին":

Այս բոլոր անօթները ափսոս թուական չունին:

6. Մոմակալ որոյ երեսին գրուած է:

"Յիշատակ է Շամախեցի Ղազար Գրիգորևանի կողակից Հռիփսիմայ Յակոբովնայն. 1819 11/6":

7. Զանգակ ձեռաց վեց հատ՝ յորոց մէկի վրայ գրուած է այսպէս.

"Յիշատակ է Սիմէօնի որդի Մկրին Քարքանջի նկեղեցուն. թվ. ՌՃԶԳ. (1734) և միւսի վրայ գրուած "Յիշատակ է Տէր Գէորգի դուստր Եղիսաբէթին ի դուռն Քարքանջու սուրբ Սահակ վարդապետին. թվ. ՌՃԿԷ (1716):

Շամախեցի և Բագուեցի մեծապատիւ Լալայեան իշխանք, որպէս ասացին բուն Քարքանջեցիք են նոյնպէս Պարսկաստանից եկած, և ներկայիս պապն Խան Պօղոս անուամբ դադթել է Շամախի, 1800 թուին[1]) որոց յիշատակ է սուրբ Սահակ

---

[1])Լալաեանց ազգատոհմի պատմութիւնը գրուած է "Կենսագրական ակնարկ, վերնագրով յօդուածումն՝ Շամախու տեղագրութեան մէջ: